ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Մասնակցում են՝
Հանձնաժողովի նախագահող՝ Վ. Առուշանյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Մեհրաբյանը, Հ. Ռամազյանը, Ա. Գևորգյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Մուրադյանը
Բացակայում է՝ Ա. Խաչիկյանը

1. Գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի ընթացքում որոշում ընդունելու մասին

(Վ. Առուշանյան)

- վայրը՝ Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 321 սենյակ.
-օրը՝ 30.12.2019թ.
-ժամը՝ 11:00

1.1 Գանահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.12.2019 թվականին տրամադրված պարզաբանումը, ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 26-րդ հոդվածի 1-ին մասով, որոշեց մերժել «Հարությունյան Շին» ՍՊ և «ԷմԷնՋի Փլասթիք-Գոգիչ» ԴՕՕ Ինդիա ընկերությունների /Կոնսորցիում/ կողմից ներկայացված առաջարկը՝ 3.1 հավելվածում ապրանքի ամբողջական նկարագրում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին և պայմանագիր կնքել՝ պայմանագրում ներառելով վերջինիս կողմից տրամադրված 3.1 հավելվածում նշված ապրանքի ամբողջական նկարագիրը և տեխնիկական բնութագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3 դեմ–0

1.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում գնման առարկայի համար նախատեսված գումարը տեղափոխվել և նախատեսվել է Երևան քաղաքի 2020 թվականի բյուջեով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «Գնումների մասին» օրենքի պահանջների համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ընտրված մասնակցի հետ կնքել «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/1» ծածկագրով ապրանքի գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ–0

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.

Հանձնաժողովի		
Նախագահող՝		Վ. Առուշանյան
Անդամներ՝		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Գ. Մուրադյան